ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«05» հունիսի 2019թվականի N 11 կարգադրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքում գործող տնտեսվարող սուբյեկտների մոտ հսկողության իրականացումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ.Գրիգորյանին և առաջատար մասնագետ՝ Հ.Բաղդասարյանին:
2. Սույն կարգադրությամբ նախատեսված հսկողությունն իրականացնել յուրաքանչյուր տնտեսվարողի մոտ մեկ օր և արդյունքների մասին հայտնել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

2020թվականի հունիսի 5
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«03» հունիսի 2020թվականի N 41-Ա որոշում

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> N9 որոշումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի սեփականությունն հանդիսացող (0007 ծածկագրից) 0.0224հա բնակավայրերի նշանակության այլ հողին տալ հասցե՝ «Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Երևանյան N 59/1»:
2. Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020 թվականի հունիսի 3,
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42ենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«03» հունիսի 2020թվականի N 42-Ա որոշում

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի հողի սեփականատերերի դիմումները՝ հողի տեսքի փոփոխության վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյանիկյան համայնքի հետևյալ հողի սեփականատերերի պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը ցածրարժեքից փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի.

1) Գագիկ Հովհաննիսյանի 04-066-0191-0057կադաստրային ծածկագրի 0.5հա վարելահողը դարձնել ծիրանի այգի(հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N17042018-04-0042),

2) Համբարձում Սուլթանյանի 04-066-0126-0037կադաստրային ծածկագրի 0.34հա վարելահողը դարձնել խաղողի այգի(հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական- N30122019-04-0028)

2.Որոշման օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020թվականի հունիսի 3,
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«3» հունիսի 2020թվականի N 43-Ա որոշում

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ սահմանված դրույթներով և հիմք ընդունելով 02.06.2020թվականի ԱՁ <<Արման Գևորգյան>>-ից ստացված հողամասի հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյանիկյան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանյան 59/1 հասցեում գտնվող 0.0224հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասի:
2. Մյասնիկյան համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

<<3>>հունիսի 2020թվական
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ի

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«10» հունիսի 2020թվականի N 44-Ա որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի,<Պաշտպանության մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի մայիսի 20-ի N 591որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի զորահավաքային մարմնի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի զորահավաքային մարմնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020 թվականի հունիսի 10,
Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42ենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«10» հունիսի 2020թվականի N 45-Ա որոշում

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով <<Վեոլիա ջուր>>ՓԲԸ-ի կողմից ներկայացրած դիմում-հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տալ նախագծման թույլտվություն՝ /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի՝ Խ. Աբովյան, Հ. Ավետիսյան, Պ.Սնակ փողոցների ջրագծերի վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

2.Աշխատանքների կատարման հսկողությունը հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ.Գրիգորյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020 թվականի հունիսի 10,
Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«22» հունիսի 2020թվականի N 46-Ա որոշում

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի բնակիչ՝ Արսեն Սարգսյանի դիմումը՝ հողի տեսքի փոփոխության վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյանիկյան համայնքի բնակիչ, հողի սեփականատեր՝ Արսեն Ռադիկի Սարգսյանին 04-066-0180-0058 կադաստրային ծածկագրով պատկանող 0.9հա վարելահողը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N30122019-04-0089) և 04-066-0180-0072կադաստրային ծածկագրի 0.45հա վարելահողը (սեփականության իրավունքի գրանցման վկայական- N30122019-04-0028) ցածրարժեքից փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ խաղողի այգու:

2.Որոշման օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020թվականի հունիսի 22,
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42ենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«23» հունիսի 2020թվականի N 47-Ա որոշում

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Մյասնիկյան համայնքի բնակիչ՝ Ռիմա Շիրակի Հովհաննիսյանի դիմումը՝ հողի տեսքի փոփոխության վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյանիկյան համայնքի բնակիչ, հողի համասեփականատեր՝ Ռիմա Շիրակի Հովհաննիսյանի հետևյալ գյուղատնտեսական նշանակության վարելահողերը ցածրարժեքից փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի.

1) 04-066-0179-0008 ծածկագրի 0.5հա վարելահողից 0.1հա-ն դարձնել խաղողի այգի,իսկ մնացած՝ 0.4հա-ն ծիրանի այգի.
2) 04-066-0179-0009 ծածկագրի 0.5հա վարելահողը դարձնել խաղողի այգի:

2.Որոշման օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորոբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020թվականի հունիսի 23.
Հ.Մյասնիկյան